# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «Վ 1Պ-Մ ԱԱՊՁԲ-20/17-1»

«10» հունիսի 2020 թ.

ք. Վանաձոր

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրենի Վ. Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Սամվել Անանյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __3__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 497700 (չորս հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (հավելված N3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է

---

[1] Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

ունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին ջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում ր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից գանձվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված պայմանագիր լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[2] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

[3] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

տատված համաձայնության: Պայ՛մանագրից ծագած պահանջի
վունքը չի կարող փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի
ավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի
պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ
վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում
արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով
կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի
կնքումը, վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր
(տեղեկություններ և տվյալներ),կամ վերջինիս ընտրված մասնակից
ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի
Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերով ի հայտ
գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու
պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև
պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների
մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն
հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդորում,
Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով
Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի
ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության
օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի
կրած վնասներն այն ծավալով,որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության
Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող
են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝
համաձայնագիր կնքելու միջոցով,որը կհանդիսանա պայմանագրի
անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը
գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող
յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել
այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող
ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գին կամ
պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է
պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ
Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
պայմանագրի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել-
8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը լրանալը՝ Վաճառողի
մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը Գնորդի մոտ
առաջարկության առկայության դեպքում,պայմանով,որ Գնորդի մոտ
սույն պայմանագրով սահմանված ապրանքի օգտագործման պահանջը:
Ընդ որում սույն ապրանքի մատակարարման ժամկետը
չի վերացել ապրանքի մատակարարման ժամկետը
կետով սահմանված դեպքում ապրանքի մինչև 30օրացուցային օրով,բայց
կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30օրացուցային օրով,բայց
ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի
(Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած
վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ
պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման
շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող
պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման
դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն
ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող
պարտավորությունների կատարման հետ կապված
հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ
կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց
համար պատասխանատու է Վաճառողը:
8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-
թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ՝
լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի
կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն
անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման
համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն

ողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ | ԱՁ Սամվել Անանյան |
| Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 , | ք.Վանաձոր, Վարդանանց 51 |
| < Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ | «Ինեկոբանկ» Վանաձոր մ/ղ |
| Հ/Հ 247170009663 | Հ/Հ 205023201781001 |
| ՀՎՀՀ 06907013 | ՀՎՀՀ 68841899 |
| Տնօրեն՝ Վ.Ս.Օհանյան | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |
| ստորագրություն | |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավ...
«10» հունիսի 2020թ. կ...
N «Վ 1ԴՎՄԱԱՊՁԲ-20/17-1» ծածկագրով պայմանագ...

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը ** | չափման միավորը | ընդհանուր քանակը | միավոր գինը/Հ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը *** |
| 1 | 31521300 | էլ.լամպ 100 վ | հատ | 100 | 100 | 10000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 100 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 2 | 31521420 | էլ.լամպ ցերեկային 20ВТ | հատ | 20 | 700 | 14000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 3 | 31521420 | էլ.լամպ ցերեկային 10ВТ | հատ | 20 | 1000 | 20000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 4 | 39541120 | Էլ.կաբել | մետր | 80 | 300 | 24000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 80 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 5 | 44163270 | Սիֆոն | հատ | 10 | 450 | 4500 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 10 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 6 | 44521120 | Դռան փական | հատ | 10 | 4000 | 40000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 10 | Հունիս10-դեկտեմբեր 25 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 44521120 | Դռան փական | հատ | 10 | 6000 | 60000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան, 17 | 10 | Հ[illegible] դեկտեմ[illegible] |
| 8 | 44411100 | Ծորակ | հատ | 3 | 1700 | 5100 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 3 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 9 | 44411300 | Լվացարան | հատ | 1 | 14000 | 14000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 1 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 10 | 24911200 | Էմուլսիա սոսինձ | հատ | 5 | 1000 | 5000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 11 | 18421130 | Ձեռնոց տնտեսական | զույգ | 20 | 350 | 7000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 12 | 42131410 | Փականի միջուկ 1 | հատ | 15 | 1700 | 25500 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 15 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 13 | 39837000 | Ցախավել | հատ | 20 | 2500 | 50000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 14 | 44511110 | Բահ կոթով | հատ | 5 | 1700 | 8500 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 15 | 44111413 | Ներկ/յուղաներկ/ | կգ | 4 | 1000 | 4000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 4 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 16 | 44111413 | Ներկ/յուղաներկ/ | կգ | 5 | 1200 | 6000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 17 | 44511170 | Փոցխ | հատ | 5 | 1400 | 7000 | ք. Վանաձոր, Սյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 39221460 | Ներկի վրձին | հատ | 5 | 400 | 2000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 5 | [illegible]-դեկտեմ[illegible] |
| 19 | 39221460 | Ներկի վրձին | հատ | 5 | 1100 | 5500 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 20 | 44411100 | Ջրի ծորակ | հատ | 6 | 4000 | 24000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 6 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 21 | 44411100 | Ջրի փական 1/2 | հատ | 5 | 1200 | 6000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 22 | 44163270 | Ֆում ժապավեն | հատ | 5 | 300 | 1500 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 23 | 44163270 | Ֆում ժապավեն | հատ | 5 | 100 | 500 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 5 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 24 | 44163270 | Անցում 1/2 | հատ | 3 | 250 | 750 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 3 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 25 | 44141110 | Ջրի խողովակ 1/2- 1 մ-ց | հատ | 10 | 300 | 3000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 10 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 26 | 31711110 | Էլ. անջատիչ 62ВТ | հատ | 20 | 650 | 13000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 27 | 31684400 | Էլ. վարդակ 50 ВТ | հատ | 20 | 600 | 12000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 28 | 44511370 | Գործիքների հավաքածու | հատ | 1 | 5000 | 5000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 1 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 29 | 44423600 | Կպչուն ժապավեն | հատ | 10 | 200 | 2000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 10 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 30 | 31211140 | Էլ.ապահովիչ | հատ | 20 | 1200 | 24000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | 31211140 | Էլ.ապահովիչ | հատ | 20 | 2000 | 40000 | ք. Վանաձոր,, Մյասնիկյան , 17 | 20 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 32 | 39835000 | Յատակ լվալու փայտ | հատ | 10 | 500 | 5000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 10 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 33 | 316585000 | Էլ. երկարացուցիչ 3 մ | հատ | 3 | 2300 | 6900 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 3 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 34 | 316585000 | Էլ. երկարացուցիչ 5 մ | հատ | 3 | 2800 | 8400 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 3 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 35 | 34911150 | Շուրուփ | հատ | 290 | 5 | 1450 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 290 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 36 | 34911150 | բոլտ | կգ | 2 | 1300 | 2600 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 2 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 37 | 42415220 | Սայլակ | հատ | 1 | 12000 | 12000 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 1 | Հունիս10-դեկտեմբեր 25 |
| 38 | 44163170 | Ռետինե խողովակ | մետր | 350 | 50 | 17500 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 350 | Հունիս10-դեկտեմբեր 25 |

**ԳՆՈՐԴ**

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,
< Ինեկոբանկ >Վանաձոր մ/դ

ՀՎՀՀ 06907013

Տնօրեն Վ.Ա.Օհանյան

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Սամվել Անանյան
ք.Վանաձոր, Վարդանանց 51
«Ինեկոբանկ» Վանաձոր մ/դ
Հ/Հ 205023201781001
ՀՎՀՀ 68841899

/ստորագրություն/

Կ.Տ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31521100 | էլ.լամպ 100 վ | % | % | % | % | % | % | 3333 | 5000 | 6667 | 8333 | 10000 | 10000 | 3333 |
| 2 | 31521420 | էլ.լամպ ցերեկային 20ВТ | % | % | % | % | % | % | 4667 | 7000 | 9333 | 11667 | 14000 | 14000 | 4667 |
| 3 | 31521420 | էլ.լամպ ցերեկային 10ВТ | % | % | % | % | % | % | 6667 | 10000 | 13333 | 16667 | 20000 | 20000 | 6667 |
| 4 | 39541120 | Էլ.կաբել | % | % | % | % | % | % | 8000 | 12000 | 16000 | 20000 | 24000 | 24000 | 8000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 44163270 | Սիֆոն | % | % | % | % | % | % | 1500 | 2250 | 3000 | 3750 | 4500 | 4500 | 1500 |
| 6 | 44521120 | Դռան փական | % | % | % | % | % | % | 13333 | 20000 | 26667 | 33333 | 40000 | 40000 | 13333 |
| 7 | 44521120 | Դռան փական | % | % | % | % | % | % | 20000 | 30000 | 40000 | 50000 | 60000 | 60000 | 20000 |
| 8 | 44411100 | Ծորակ | % | % | % | % | % | % | 1700 | 2550 | 3400 | 4250 | 5100 | 5100 | 1700 |
| 9 | 44411300 | Լվացարան | % | % | % | % | % | % | 4667 | 7000 | 9333 | 11667 | 14000 | 14000 | 4667 |
| 10 | 24911200 | Էմուլսիա սոսինձ | % | % | % | % | % | % | 1667 | 2500 | 3333 | 4167 | 5000 | 5000 | 1667 |
| 11 | 18421130 | Ձեռնոց տնտեսական | % | % | % | % | % | % | 2333 | 3500 | 4667 | 5833 | 7000 | 7000 | 2333 |
| 12 | 42131410 | Փականի միջուկ 1 | % | % | % | % | % | % | 8500 | 12750 | 17000 | 21250 | 25500 | 25500 | 8500 |
| 13 | 39837000 | Ցախավել | % | % | % | % | % | % | 16667 | 25000 | 33333 | 41667 | 50000 | 50000 | 16667 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 44511110 | Բահ կոթով | % | % | % | % | % | % | 2833 | 4250 | 5667 | 7083 | 8500 | 8500 | 2833 |
| 15 | 44111413 | ներկ/յուղաներկ/ | % | % | % | % | % | % | 1333 | 2000 | 2667 | 3333 | 4000 | 4000 | 1333 |
| 16 | 44111413 | ներկ/յուղաներկ/ | % | % | % | % | % | % | 2000 | 3000 | 4000 | 5000 | 6000 | 6000 | 2000 |
| 17 | 44511170 | Փոցխ | % | % | % | % | % | % | 2333 | 3500 | 4667 | 5833 | 7000 | 7000 | 2333 |
| 18 | 39221460 | Ներկի վրձին | % | % | % | % | % | % | 667 | 1000 | 1333 | 1667 | 2000 | 2000 | 667 |
| 19 | 39221460 | Ներկի վրձին | % | % | % | % | % | % | 1833 | 2750 | 3667 | 4583 | 5500 | 5500 | 1833 |
| 20 | 44411100 | Ջրի ծորակ | % | % | % | % | % | % | 8000 | 12000 | 16000 | 20000 | 24000 | 24000 | 8000 |
| 21 | 44411100 | Ջրի փական 1/2 | % | % | % | % | % | % | 2000 | 3000 | 4000 | 5000 | 6000 | 6000 | 2000 |
| 22 | 44163270 | Ֆում ժապավեն | % | % | % | % | % | % | 500 | 750 | 1000 | 1250 | 1500 | 1500 | 500 |
| 23 | 44163270 | Ֆում ժապավեն | % | % | % | % | % | % | 167 | 250 | 333 | 417 | 500 | 500 | 167 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 44163270 | Անցում 1/2 | % | % | % | % | % | % | 250 | 375 | 500 | 625 | 750 | 750 | 250 |
| 25 | 44141110 | Ջրի խողովակ 1/2-1 մ-ց | % | % | % | % | % | % | 1000 | 1500 | 2000 | 2500 | 3000 | 3000 | 1000 |
| 26 | 31711110 | Էլ. անջատիչ 62ВТ | % | % | % | % | % | % | 4333 | 6500 | 8667 | 10833 | 13000 | 13000 | 4333 |
| 27 | 31684400 | Էլ. վարդակ 50 ВТ | % | % | % | % | % | % | 4000 | 6000 | 8000 | 10000 | 12000 | 12000 | 4000 |
| 28 | 44511370 | Գործիքների հավաքածու | % | % | % | % | % | % | 1667 | 2500 | 3333 | 4167 | 5000 | 5000 | 1667 |
| 29 | 44423600 | Կպչուն ժապավեն | % | % | % | % | % | % | 667 | 1000 | 1333 | 1667 | 2000 | 2000 | 667 |
| 30 | 31211140 | Էլ.ապահովիչ | % | % | % | % | % | % | 8000 | 12000 | 16000 | 20000 | 24000 | 24000 | 8000 |
| 31 | 31211140 | Էլ.ապահովիչ | % | % | % | % | % | % | 13333 | 20000 | 26667 | 33333 | 40000 | 40000 | 13333 |
| 32 | 39835000 | Չատակ լվալու փայտ | % | % | % | % | % | % | 1667 | 2500 | 3333 | 4167 | 5000 | 5000 | 1667 |
| 33 | 316585000 | Էլ. երկարացուցիչ 3 մ | % | % | % | % | % | % | 2300 | 3450 | 4600 | 5750 | 6900 | 6900 | 2300 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 316585000 | Էլ. երկարացուցիչ 5 մ | % | % | % | % | % | % | 2800 | 4200 | 5600 | 7000 | 8400 | 8400 | 2800 |
| 35 | 34911150 | Շուրուբ | % | % | % | % | % | % | 483 | 725 | 967 | 1208 | 1450 | 1450 | 483 |
| 36 | 34911150 | բոլտ | % | % | % | % | % | % | 867 | 1300 | 1733 | 2167 | 2600 | 2600 | 867 |
| 37 | 42415220 | Սայլակ | % | % | % | % | % | % | 4000 | 6000 | 8000 | 10000 | 12000 | 12000 | 4000 |
| 38 | 44163170 | Ռետինե խողովակ | % | % | % | % | % | % | 5833 | 8750 | 11667 | 14583 | 17500 | 17500 | 5833 |

**ԳՆՈՐԴ**

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,
< Ինեկոբանկ >Վանաձոր մ/դ

Հ/Հ 247170009663
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Վ.Ս.Օհանյան

Կ.Տ
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

ԱՁ Սամվել Անանյան
ք.Վանաձոր, Վարդանանց 51
«Ինեկոբանկ» Վանաձոր մ/դ
Հ/Հ 205023201781001
ՀՎՀՀ 68841899

/ստորագրություն/
Կ.Տ